ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՎԻԼԵՆ ԳԱՅՖԵՋՅԱՆԻ ԵՎ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻ՝ 05.11.2015Թ. ՍԱՀՄԱՆԱ-ԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԹԻՎ 6-436 ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վիլեն Գայֆեջյանը և Արտակ Զեյնալյանը (ներկայացուցիչներ՝ Արտակ Զեյնալյան և Հայկուհի Հարությունյան) ՀՀ սահմանադրական դատարան են դիմել 2015 թվականի նոյեմբերի 5-ին: Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՔԴ/2551/02/15 քաղաքացիական գործով արձանագրային որոշումը կայացվել է 2015 թվականի հուլիսի 28-ին:

Դիմողները ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իրենց դիմումում խնդրել են.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19, 20, 14.1. և 1-ին, 23, 27.1., 8, 31, 3-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40 հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19, 20, 14.1. և 1-ին, 23, 27.1., 8, 31, 3-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը»:

Նկատի ունենալով, որ սույն անհատական դիմումով գործը քննության ընդունելու հարցով ՍԴ դատական կազմը միաձայնությամբ որոշում չի ընդունել, ՀՀ սահմանադրական դատարանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 8-րդ մասի՝ աշխատակարգային նիստում քննելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը

համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ Վիլեն Գայֆեջյանի և Արտակ Զեյնալյանի դիմումի ընդունելիության հարցը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների դրույթների պահանջներով, գտնում է, որ գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1. Ըստ դիմողների՝ թիվ ԵԱՔԴ/2551/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասը՝ կայացրել է արձանագրային որոշում, որ Արտակ Զեյնալյանը չի կարող ներկայացնել պատասխանող Վիլեն Գայֆեջյանի շահերը և չի կարող լինել վերջինիս ներկայացուցիչը դատարանում:

Դիմողները գտնում են, որ իրենց համար բացասական իրավական հետևանքներ են առաջացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԱՔԴ/2551/02/15 գործով արձանագրային որոշմամբ կիրառված և դրանում անմիջականորեն վկայակոչված, inter alia, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասը և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը:

Դիմողները գտնում են, որ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակում-ների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա. տվյալ պարագայում նախատեսված իրավակարգավորումները ողջամիտ չեն և տարբերակ-ված վերաբերմունքի դրսևորում են:

2. Դիմող Արտակ Զեյնալյանի մասով. դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ Արտակ Զեյնալյանը դատա-րաններում չի հանդիսացել որպես դատավարության կողմ, չունի իր նկատմամբ

կայացված վերջնական դատական ակտ, հետևաբար՝ օժտված չէ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով սահմանադրական դատարան դիմելու իրավունքով: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանել է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

3. Դիմող Վիլեն Գայֆեջյանի մասով. դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա չէ Վիլեն Գայֆեջյանի նկատմամբ կոնկրետ գործով կայացված որևէ դատական ակտ:

Ըստ դիմողի՝ դատավարության ընթացքում դատարանի կողմից կայացված յուրաքանչյուր որոշում, որը ենթակա չէ բողոքարկման, հանդիսանում է կոնկրետ գործով դատարանի կողմից կայացված վերջնական ակտ: Այդ իսկ պատճառով, դիմողի կարծիքով՝ ինքն իրավունք ունի ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կարգով դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը որոշելու համար:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

Սահմանադրական այս դրույթում հստակ նշվել են այն պայմանները, որոնց համաձայն կոնկրետ անձն իրավասու է դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելու իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը: Դրանք են՝

ա) **կոնկրետ գործի** առկայությունը,

բ) **դատարանի վերջնական ակտի** առկայությունը,

գ) դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառվելը:

Ինչ վերաբերում է առաջին պայմանին, ապա հարկ է նշել, որ քաղաքացիական դատավարությունում «կոնկրետ գործ» հասկացության բովանդակությունը ներառում է այն վեճը կամ հարցը, որը լուծվում է քաղաքացիական դատավարության շրջանակներում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական գործը հարուցվում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա: Օրենսգրքի մի շարք այլ հոդվածներում ևս «քաղաքացիական գործ» հասկացության ներքո հասկացվում է միայն սահմանված կարգով հարուցված վեճի կամ այլ հարցի լուծմանն ուղղված գործընթացը:

Դիմողի պարագայում՝ կոնկրետ գործը հանդիսանում է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում ընդդեմ Վիլեն Գայֆեջյանի ՀՀ ոստիկանության հայցի հիման վրա հարուցված «Հրա-պարակայնորեն արտահայտած վիրավորանքի համար անձին քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին» գործը:

Ինչ վերաբերում է «դատարանի վերջնական ակտ» հասկացությանը, ապա դա կարող է լինել այն ակտը, որով ավարտվում է գործի դատաքննությունը, և որը ենթակա չէ բողոքարկման:

Դատավարության ընթացքում ընդունված կամ կայացված արձանագրային այն որոշումները, որոնց հիման վրա չի ավարտվում դատաքննությունը, չեն կարող համարվել կոնկրետ գործով կայացված վերջնական դատական ակտեր:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է անդրադարձ կատարել ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշմանը, որի 5-րդ կետում դատարանը նշում է, որ «հարուցված, չկասեցված և շարունակվող վարույթի տրամաբանական ավարտը գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումն է, հետևաբար՝ նման վարույթի շրջանակներում կայացված միջանկյալ ակտերը, անձի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում, կարող են վիճարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում»:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.11 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի իմաստով վերջնական դատական ակտ է համարվում օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, գործի քննությունն սկսելը և շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը:

Ելնելով վերոշարադրյալից՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողներն իրավասու չեն դիմել սահմանադրական դատարան:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Վիլեն Գայֆեջյանի և Արտակ Զեյնալյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

04 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴԱՈ-77